



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վերջերս ստացված «Երուսաղեմի հայոց վանքի վերջին դեպքերու մասին» պաշտոնական հաղորդագրությունից քաղվածաբար տալիս ենք մի շարք տեղեկություններ:

«Հանաչում Տեղապանի ընտրության. —... Դեկտեմբեր 16-ին Տեղապահ սրբազանը շնորհավորական այցելություն տվավ Երուսաղեմի նոր կառավարիչ Նորին Վսեմություն Աղնան Յոնես Էլ-Հոսեյնի, որ այս բարեպատեհ առիթով Նորին Սրբազնության հանձնեց անոր տեղապահության ճանաչման դիրք: Բարի լուրը վանք հասած ըլլալով, միաբանություն և ժողովուրդ վայրկենապես խոնվեցան վանքին դուռը և ուրախ բացաբանչություններով դիմավորեցին Սրբազանը:

Պատրիարքական ընտրության ձեռնարկ. — Տեղապահ սրբազան հայրը, նոյեմբեր 17-ի Միաբանական ընդհանուր ժողովին տված իր խոստման համաձայն, անմիջապես ձեռնարկեց պատրիարքական ընտրության գործողությանց: Դեկտեմբեր 17-ին հրավիրադրեր ղրկվեցան Հորդանանի մեջ գտնվող բոլոր միաբաններուն: Իսկ արտասահման գտնվող մյուս միաբան հայրերուն ալ հեռագրով հաղորդվեցավ ժողովի թվականն ու օրակարգը: Ազգային Սահմանադրության Երուսաղեմի վերաբերյալ բարեփոխված 22-րդ և 23-րդ հոդվածներու համաձայն, պատրիարքական ընտրությունը կկատարվի Միաբանական ընդհանուր ժողովո իրկու նիստերով: Առաջին օրը կկազմվի ընտրելից հնգանուն ցանկը, հաջորդ օր հնգանուն ցանկին վրային կընտրվի Պատրիարքը:

Հնգանուն ցանկի կազմության համար հրավիրված ժողովը գումարվեցավ դեկտեմբեր 19, չորեքշաբթի առավոտյան ժամը 10-ին: Ժողովի հրավիրված 25 միաբաններին կրացակայեին միայն Նղիշե արքեպիսկոպոս և Հայրիկ եպիսկոպոս: Կատարվեցավ գաղտնի քվեարկություն, և ընտրելից հնգանուն ցանկին մեջ մտան Տ. Տիրան արքեպիսկոպոս 22 քվեով, Տ. Սուրեն եպիսկոպոս 20 քվեով, Տ. Շնորհք եպիսկոպոս 17 քվեով, Տ. Հայկազուն եպիսկոպոս 10 քվեով և Տ. Զգոն ծայրագույն վարդապետ 10 քվեով:

Անցողակի հիշենք, որ Նղիշե արքեպիսկոպոս ստացավ միայն մեկ քվե: Նիստը փակվեցավ հաջորդ առավոտյան նույն ժամուկ գումարվելու և Ս. Աթոռ Պատրիարքի այլաբան հապաղած ընտրությունը կատարելու առաջադրությամբ:

Դատ Պատրիարքարանի դեմ. — Նույն օրվան հետմիջօրեի ժամը 4.30-ին սակայն Գերադույն ատյանին ստացվեցավ որոշմագիր մը, ըստ որում Տերտերյան արքեպիսկոպոս դատ բացած էր ներքին գործոց նախարարին և Ս. Աթոռույն Տեղապահին դեմ միանգամայն: Դերագույն ատյանը կհրահան դեր ներքին գործոց նախարարին՝ տալ իր պատճառները, թե ինչու պետք չէ շեղյալ նկատե Տիրան սրբազանի տեղապահության ճանաչումը, կհրահանգեր նաև Ս. Աթոռույն Տեղապահին կեցնել պատրիարքական ընտրության գործողությունները մինչև Գերագույն ատյանին այդ մասին տալիք վճիռը:

ՍԿՈՒՏԱՐԻ ՍՈՒՐԻ ԽԱՉ ԴՊՐԵՎԱՆՔԸ

Թյուրքիայի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվութիւն Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի պատրիարքութեան տարիների գեղեցիկ ձեռնարկումներից մեկը հանդիսացավ Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի բացումը:

Անցյալում, ինչպես նաև մեր օրերում, մեր ազգային-եկեղեցական տարեգրութեանց և մեր մշակութի պատմութեան մեջ, մեծ ու պատասխանատու է եղել հոգևոր ձեռնարանների, ընծայարանների, դպրեվանքների և ժառանգավորաց վարժարանների դերը: Էջմիածնի, Դվինի, Տաթևի, Սանահինի, Հաղբատի, Գլաձորի, Կարմիր վանքի, Սիսի, Երուսաղեմի, Աղթամարի, Արմաշի և այլ հոգևոր մշակութային կենտրոնների անունները վաղուց անցել են մեր մշակութի պատմութեան մեջ:

ական թվականներից շատ կարևոր և պատմական դեր կատարեց Թյուրքիայի Հայոց Պատրիարքութեան պատմութեան մեջ, բազմակողմանիորեն զարգացած հոգևորական նոր սերնդի պատրաստութեան գործում:

Գարեգին Պատրիարքը Թյուրքիայի Հայոց Պատրիարքութեան զահր բարձրանալու առաջին իսկ օրերից, պատասխանատվութեան խոր զգացմունքով ձեռնամուխ եղավ Ստամբուլում նոր դպրեվանքի վերաբացման աշխատանքներին:

Սրանից շուրս տարի առաջ տեղի ունեցավ Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի բացումը, հանդիսավոր ու խանդավառ իրադրութեան մեջ:

Նորին Ս. Օծութիւն. Վեհափառ Հայրապետին ուղղած 1956 թվականի դեկտեմբերի 12-ի իր պաշտոնական նամակում ձեռնու-



Սկյուտարի Սուր Խաչ դպրեվանքի ուսանողները Պատրիարք սրբազանի, վերառեսչի և ուսուցչական կազմի հետ

Այդ լուսավոր անունների վրա ավելացավ Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի անունը, որպես հարազատ շարունակութիւնը Արմաշի այն դպրեվանքին, որն անցյալ դարի 80-

կարդ և գիտուն Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը գոհունակութեամբ գրում է.

«Մեր նորահաստատ Ս. Խաչ դպրեվանքը թեև կոխած է իր շորորոգ տարին: Աշակերտ-

ներու թիվն է այժմ 84, չորս դասարաններու բաժնված: Ունի 9 տարվան դասընթացք մը, երեք միջնակարգի, երեք լիսեի և երեք Ընծայարանի: Մեր այժմու շորորդ կարգը լիսեի առաջին դասարանն է: Միջնակարգի և լիսեի մեջ կկիրարկվի պետական ծրագիրը, որուն մեջ տեղ ունի նաև հայերեն լեզուն և հայերենով ուսուցումը կարգ մը ճյուղերու: Իսկ Ընծայարանը ունի իր ուրույն ծրագիրը կրօնական բովանդակությամբ և պետականորեն հաստատված: Այն աշակերտները, որ կամուսնեն լիսեի կարգը, կընդունին դպրության չորս աստիճանները, անոնք որ կանցնին Ընծայարանի բաժինը, կձեռնադրվին սարկավագ, եթե ուխտեն դառնալ եկեղեցական՝ կուսակրոն թե ամուսնացյալ: Ընծայարանի դասընթացքը լրացնելէ հետո, սարկավագները կձեռնադրվին արեղա կամ քահանա: Անոնք որ չեն ուզեր եկեղեցական ասպարեզն ընտրել, կդառնան ուսուցիչներ կամ կշարունակեն իրենց ուսումը համալսարաններու մեջ և կամ կդառնան զարգացած ու բարեկիրթ քաղաքացիներ: Դպրեվանքի վերատեսուչն է Տ. Դարեգին ծայրագույն վարդապետ Գազանճյան, նրուաաղեմի երիտասարդ միաբաննե-

րեն, որ մոտ ատենեն պիտի ունենա իր օգնականը հանձին Տ. Շահե արեղա Սիմոնյանի, շահած ըլլալով մեծ ժողովրդականութուն: Կջանանք, սակայն, ստեղծել մնայուն աղբյուրներ և նյութական մատակարարութունը դնել հաստատուն դետնի վրա: Ս. Խաչ դպրեվանքը կդառնվի Սկյուտարի մեջ, դեղեցկադիր և ծովահայաց բարձունքի մը վրա: Կբաղկանա երկու ընդարձակ շենքեր, մեկը չորս տարիներ առաջ կառուցված, մյուսն ալ նոր կկառուցվի և արդեն լրանալու վրա է:

Ուրախությամբ ենք արձանագրում այստեղ այն երջանիկ փաստը, որ այսօր, Նորին Ս. Օծուքուն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալությամբ սկսված է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր վերազարթոնքի մի նոր շրջան:

Թյուրքիայի Հայոց արժանընտիր Պատրիարքի եռանդուն և անմիջական հսկողությամբ ղեկավարված Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի գոյութունը մեծ ու հուսադրելի երաշխիք է այդ վերադարձնքը ապահովելու և արդյունավետ դարձնելու նաև Թյուրքիայում ապրող մեր հավատացյալ ժողովրդի սրտում և հոգում:

